ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 17-Ա

«04» մարտի 2021 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՂՋԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.47759 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ, 22.1-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ողջի բնակավայրում գտնվող Կարինե Գեորգիի Մելիքսեթյանին /հետագայում քաղաքացի/ սեփականության իրավունքով պատկանող 08-091-0017-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.47759 հեկտար հողամասում /հասցեն՝ մարզ Շիրակ, Ամասիա համայնք, գյուղ Ողջի, 10-րդ փողոց, թիվ 6/ ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության բնակելի օժանդակ շինությունները բավարարում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված օրինականացման պայմանները, հիմք ընդունելով քաղաքացու 2021 թվականի մարտի 02-ի դիմումը.

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ողջի բնակավայրում գտնվող Կարինե Գեորգիի Մելիքսեթյանին սեփականության իրավունքով պատկանող 08-091-0017-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.47759 հեկտար

հողամասում /հասցեն՝ մարզ Շիրակ, Ամասիա համայնք, գյուղ Ողջի, 10-րդ փողոց, թիվ 6/ ինքնակամ կառուցված **315,30** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ թվով 8 միավոր շինությունները ճանաչել օրինական և դրանք համարել քաղաքացու սեփականությունը:

2. Նշել, որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագիծը կցվում է որոշմանը:

4. Հաշվի առնելով, որ քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերում բնակելի օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի համաձայն, շինություններն օրինական ճանաչվելու համար, նշված կարգի 13-րդ կետի «բ» ենթակետերով նախատեսված վճարը չգանձել:

5. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման՝ քաղաքացու միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«04» մարտի 2021 թվական
գյուղ Ամասիա